ԿԱ ՄԻ ԶՐՈՒՅՑ, ԹԵ...

ՎԱՆԿ

Եկեք զրույցներից դուրս գրենք բառեր, որոնք օդի մեկ մղումով են արտասանվում՝ ժայռ, հին, գետ և այլն: Այժմ դուրս գրենք բառեր, որոնք օդի երկու և ավելի մղումով են արտասանվում՝ գետափ, արահետ, գիտնական, ժամանակ և այլն:

Օդի մեկ մղումով արտասանվող հնչյունը կամ հնչյունախումբը կոչվում է վանկ:

Օրինակ՝ զարդ, գույն, նույ-նիսկ, ժա-մա-նակ, հա-րա-զատ, բար-ձրը, ա-ռա-քի-նութ-յուն:

Մեկ վանկից կազմված բառերը միավանկ են: Երկու և ավելի վանկերից կազմված բառերը բազմավանկ են: Առանց ձայնավորի վանկ չի կարող կազմվել: Բառի մեջ որքան ձայնավոր կա, այդքան էլ վանկ կա: Բարի բառը երկվանկ է, քանի որ երկու ձայնավոր ունի՝ ա, ի:

Վանկը կարող է կազմվել նաև միայն մեկ ձայնավորով, օրինակ՝ ա-մառ, ու-տել, օ-րա-գիր:

Ձայնավորով ավարտվող կամ միայն ձայնավորից կազմված վանկը կոչվում է բաց վանկ, օրինակ՝ տա-րի, բա-րի, մա-տա-նի, կա-նա-չի, ա-ռու, կա-տու բառերի վանկերը բաց են:

Բաղաձայնով ավարտվող վանկը կոչվում է փակ վանկ, օրինակ՝ Վար-դան, որ-սորդ, եղ-նիկ բառերի վանկերը փակ են:

Լսվող, բայց չգրվող ը հնչյուն ունեցող վանկը կոչվում է գաղտնավանկ: Ը-ն գրվում է վանկատման և տողադարձի ժամանակ, օրինակ՝ կըր-թություն, ջը-րաման, ծա-նըր:

Լինում են նաև մեկուկեսվանկանի բառեր: Դրանք այն բառերն են, որոնք կազմված են մեկ լիարժեք վանկից և գաղտնավանկից, օրինակ՝ ար-կ(ը)ղ, տե-տ(ը)ր, ոս-կ(ը)ր, դուս-տ(ը)ր,

և այլն:

Առաջադրանքներ

1. Վանկատիր տրված բառերը՝ բաց և փակ վանկերը դասդասելով երկսյուն աղյուսակի համապատասխան սյունակներում:

Ընթացք, ընկերասեր, փետրագնդակ, փնթփնթալ, բաժակ, ժամագործ, աղավնի, ձանձրալի, գաղտնարան, գերազանց, գրող, զանգակատուն, զուգահեռանիստ, ընդարձակ, թերթաքար, նամակաբեր, նոսր, պարահանդես, ռեհան, վարորդ, բերան, ուժեղ, փաստաբան:

2. Բառերի վերջում կցիր այնպիսի հնչյուն, որ նորակազմ բառն ունենա գաղտնավանկ:

Եզ, քաղց, ազդ, արկ, համ, հյուս:

Օրինակ՝ հյուս – հյուսն: